Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

03.12.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.12.2014թ.-ի թիվ 127 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնում անցկացվեց 2014թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց բաժնի պետ՝ Վ.Իսախանյանը:

Նախնական տվյալներ.

Բաժնում ընդգրկված են 2 գլխավոր մասնագետ/մանկավարժ, հոգեբան/, 2 առաջատար մասնագետ/իրավաբան, սոցիալական աշխատող/ և 1 կրտսեր մասնագետ/բժիշկ/, որը թափուր է: Բաժինը ղեկավարում է բաժնի պետը: Բաժինը ունի բաժնի կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Բաժնի պետը և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում բաժնի գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

ա/ Բաժնի կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Երեխայի իրավունքների մասին>>, <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական աջակցության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի <<Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգ հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 269-Ն որոշման և 2003թ.-ի օգոստոսի 8-ի <<Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 1000-Ն որոշումների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանը և Հասմիկ Ավետիսյանը: ՈՒՆեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Համադրել ենք <<Երեխայի իրավունքների մասին>>, <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական աջակցության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի <<Որդեգրման կարգը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգ հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 269-Ն որոշման և 2003թ.-ի օգոստոսի 8-ի <<Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 1000-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի մարզպետին վերապահված լիազորությունները բաժնի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Բաժնի կանոնադրությամբ, բաժնի գործառույթները, բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքները և պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Վ. Իսախանյան